

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ հունիս 2024 թվականի N _____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
19-Ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1.-րդ կետով.

«25.1. Ձկնաբուժական տնտեսության ոլորտի շինությունների կառուցման նպատակով հայցվող դիմումին կից պետք է ներկայացվի նաև վավեր ջրօգտագործման թույլտվության առկայության փաստը հավաստող փաստաթուղթը:»

2) Որոշման N 5 հավելվածի N 4-1 ձևի 1-ին կետը լրացնել գ. ենթակետով.

«գ. վավեր ջրօգտագործման թույլտվության առկայության փաստը հավաստող փաստաթղթի պատճեն _____ թերթ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 20 օր հետո:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան